ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» սեպտեմբերի 2013թ. **N –Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 580-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 50-րդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 210-217-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2013 թվականի ծրագրի վերաբերյալ» N 580-Ն որոշման (այսուհետ՝ Որոշման) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) հողամասերն օգտագործման, այդ թվում՝ սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) տրամադրելու և օտարման հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության հողային, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքերին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմանը և հողային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերին համապատասխան.».

2) Որոշման 2-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) հողամասերն անհատույց օգտագործման կամ վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվում են մինչև 99 տարի ժամկետով: Հողամասերի սահմանափակ օգտագործումը (սերվիտուտ) կարող է լինել ժամանակավոր՝ մինչև 99 տարի ժամկետով, կամ մշտական.».

3) Որոշմամբ հաստատված հավելվածի (այսուհետ՝ հավելված) 2-րդ կետը «օգտագործման» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ սահմանափակ օգտագործման (սերվիտուտ)» բառերով.

4) հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) Գույքի օտարումից, վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքով հանձնելուց ստացված միջոցների հաշվին Երևանի բյուջեում եկամուտների ապահովումն ու ավելացումը:»:

5) հավելվածի 4-րդ գլխի վերնագիրը «օգտագործման» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ սահմանափակ օգտագործման (սերվիտուտ)» բառերով.

6) հավելվածի 28-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«28. Սույն գլխով կարգավորվում է Գույքի օգտագործման, այդ թվում՝ սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) տրամադրելու հարցերը, Գույքի վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) վարձա(վճարների) չափերը».

7) հավելվածը լրացնել լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 33.1-ին կետով.

«33.1 Սահմանափակ օգտագործման իրավունքով (սերվիտուտ) հողամասերը տրամադրվում են սերվիտուտ պահանջող անձի և Երևան համայնքի՝ նոտարական կարգով վավերացված գրավոր համաձայնությամբ:».

8) հավելվածի 34-րդ կետի 2-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ «ժա» պարբերությամբ.

«ժա. հանքային իրավունք ունեցող անձանց տրամադրված լեռնահատկացման ակտի սահմաններում գտնվող հողամասերի համար՝ 3 տոկոս».

9) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 34.1-ին կետով.

«34.1 Սահմանել, որ սահմանափակ օգտագործման իրավունքով (սերվիտուտ) տրամադրվող հողամասերի տարեկան վարձավճարը հաշվարկվում է հողամասերի հողի հարկի տարեկան դրույքաչափին հավասարեցված վճարով:».

10) Հավելվածի 36-րդ և 37-րդ կետերը «օգտագործման» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ սահմանափակ օգտագործման (սերվիտուտ)» բառերով.

11) հավելվածի VI-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 75-169-րդ կետերով.

«

75	Դավթաշեն	01-004-007-301	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Դավթաշեն 2-թաղ.
76	Ավան	01-002-221-092	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Ծարավ Աղբյուրի փողոցին հարող տարածք
77	Շենգավիթ	01-011-049-164	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Շիրակի փողոցին հարող տարածք
78	Նոր Նորք	01-008-022-016	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Սաֆարյան փողոցին հարող տարածք
79	Մալաթիա-Սեբաստիա	001-006-992-001	Բնակավայրերի	բնակելի	Էջմիածի հին խաճուղուն հարող տարածք

80	Կենտրոն	01-006-318-097	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ	Արշակունյաց պողոտային հարող տարածք
81	Մալաթիա-Սեբաստիա	01-007-1554-001	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ	Իսակովի պողոտային հարող տարածք
82	Կենտրոն	01-006-001-460	Բնակավայրերի	բնակելի	Անտառային փողոցին հարող տարածք
83	Արաբկիր	01-003-214-172	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ	Կոմիտասի պողոային հարող տարածք
84	Աջափնյակ	01-007-1465-001	Բնակավայրերի	ընդհ. օգտագործ.	«Եռաբլուր» փառքի պանթեոնին հարող տարածք
85	Աջափնյակ	01-007-1467-001	Բնակավայրերի	ընդհ. օգտագործ.	«Եռաբլուր» փառքի պանթեոնին հարող տարածք
86	Մալաթիա-Սեբաստիա	01-007-413-032	Բնակավայրերի	բնակելի	Միքայելյան փողոցին հարող տարածք
87	Արաբկիր	01-003-1309-001	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ	Ադոնցի փողոցին հարող տարածք
88	Նորք-Մարաշ	01-009-090-087	Բնակավայրերի	բնակելի	Նորքի Այգիներ
89	Քանաքեռ-Զեյթուն	01-012-306-140	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ	Ռուբինյանց փողոցին հարող տարածք
90	Դավթաշեն	01-004-110-244	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ	Դավթաշեն 3-րդ թաղ.
91	Աջափնյակ	01-001-613-003	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ	Սպանդարյան
92	Աջափնյակ	01-001-338-037	Բնակավայրերի	տնամերձ	Լենինգրադյան փողոցին հարող տարածք
93	Աջափնյակ	01-001-338-041	Բնակավայրերի	ընդհ. օգտագործ.	Լենինգրադյան փողոցին հարող տարածք
94	Աջափնյակ	01-001-442-037	Արդյունաբեր., ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	գյուղտնտ. արտադր.	Սիլիկյան թաղամասի 10-րդ փող.-ին հարող տարածք
95	Աջափնյակ	01-001-215-059	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Բաշինջաղյան 16/2 ավտոլվացման
96	Աջափնյակ	01-001-354-026	Բնակավայրերի	տնամերձ	Լուկաշինի փող.-ին հարող տարածք

97	Ավան	01-002-004-108-001	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Նարեկացու փող.-ին հարող տարածք
99	Ավան	01-002-003-147-001	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Մոլդովական փողոցին հարող տարածք
100	Արաբկիր	01-003-127-060	Բնակավայրերի	տնամերձ	Գուլակյան փողոցին հարող տարածք
101	Արաբկիր	01-003-242-024	Բնակավայրերի	տնամերձ	Արաբկիր 19 փողոցին հարող տարածք
102	Արաբկիր	01-003-203-125	Բնակավայրերի	ընդհ. օգտագործ.	Հ. Արղությանի փողոցին հարող տարածք
103	Արաբկիր	01-003-203-092	Բնակավայրերի	տնամերձ	Հ. Արղությանի փողոցին հարող տարածք
104	Արաբկիր	01-003-006-015	Բնակավայրերի	ընդհ. օգտագործ.	Սեւքարեցի Սաքոյի փող.-ին հարող տարածք
105	Արաբկիր	01-003-113-028	Բնակավայրերի	տնամերձ	Սարալանջի պտտողային հարող տարածք
106	Դավթաշեն	01-004-1210-001	Բնակավայրերի	ընդհ. օգտագործ.	Մելքումովի փողոցին հարող տարածք
107	Էրեբունի	01-005-231-001	Բնակավայրերի	ընդհ. օգտագործ.	Լորիս-Մելիքյանի փող.-ին հարող տարածք
108	Էրեբունի	01-005-312-007	Բնակավայրերի	տնամերձ	Դավիթ Բեկի փող.-ին հարող տարածք
109	Էրեբունի	01-005-121-025	Բնակավայրերի	տնամերձ	Դավիթ Բեկի փող.-ին հարող տարածք
110	Էրեբունի	01-005-121-024	Բնակավայրերի	տնամերձ	Դավիթ Բեկի փող.-ին հարող տարածք
111	Էրեբունի	01-005-247-003	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվ. օբյեկտների	Էներգետիկայի	Արցախի փ.-ին հարող տարածք
112	Էրեբունի	01-005-247-004	Բնակավայրերի	տնամերձ	Արցախի փ.-ին հարող տարածք
113	Էրեբունի	01-005-256-002	Բնակավայրերի	ընդհ. օգտագործ.	զինվորական հոսպիտալին հարող տարածք
114	Էրեբունի	01-005-602-005	Արդյունաբեր., ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	արդյունաբ.	Վարդաշեն 9-րդ փ.-ին հարող տարածք
115	Էրեբունի	01-005-221-088	Բնակավայրերի	տնամերձ	Երկաթգծի փ.-ին հարող տարածք

116	Էրեբունի	01-005-559-107	Բնակավայրերի	խառը կառուցապ.	Խաղաղ Դոնի փողոցին հարող տարածք
117	Կենտրոն	01-006-525-069-001	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Բուզանդի փող.-ին հարող տարածք
118	Կենտրոն	01-006-992-001	Բնակավայրերի	ընդհ. օգտագործ.	Էջմիածնի հին խճուղուն հարող տարածք
119	Կենտրոն	01-006-001-106	Բնակավայրերի	տնամերձ	Անտառային փող 160
120	Մալաթիա-Սեբաստիա	01-007-233-021-001	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվ. օբյեկտների	Էներգետիկայի	Անդրանիկի պողոտային հարող տարածք
121	Մալաթիա-Սեբաստիա	01-007-404-001-1787	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվ. օբյեկտների	կոմուն. ենթակառ.	Ռաֆֆու փողոցին հարող տարածք
122	Մալաթիա-Սեբաստիա	01-007-1554-001	Բնակավայրերի	ընդհ. օգտագործ.	Ծովակալ Իսակովի պողոտային հարող տարածք
123	Մալաթիա-Սեբաստիա	01-007-442-001	Հատուկ նշանակության	Հատուկ նշանակության	«Եռաբլուր» փառքի պանթեոնին հարող տարածք
124	Մալաթիա-Սեբաստիա	01-007-413-032-001	Բնակավայրերի	տնամերձ	Ջիվանու փողոցին հարող տարածք
125	Նոր Նորք	01-008-022-016-001	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	1 մ/շ., Սաֆարյան փ, բաղնիքին հարող տարածքում ,
126	Նորք-Մարաշ	01-009-023-032	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Նորք 5փ. կից
127	Նորք-Մարաշ	01-009-023-032	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Նորք 5փ. կից
128	Նուբարաշեն	01-010-108-017	Բնակավայրերի	ընդհ. օգտագործ.	Սարի թաղ 9 - րդ փողոցին հարող տարածք
129	Շենգավիթ	01-011-688-122	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Եղ. Թադևոսյան նրբ.-ին հարող տարածք
130	Շենգավիթ	01-011-1517-001	Բնակավայրերի	ընդհ. օգտագործ.	Ֆրունզեի փող.-ին հարող տարածք
131	Շենգավիթ	01-011-205-051-001	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվ. օբյեկտների	կոմուն. ենթակառ.	Շիրակի փ. 92/1
132	Շենգավիթ	01-011-014-	Բնակավայրերի	տնամերձ	Ղարիբջանյան փող.-ին

		019			հարող տարածք
133	Շենգավիթ	01-011-1454-001	Բնակավայրերի	ընդհ. օգտագործ.	Ղարիբջանյան փող.-ին հարող տարածք
134	Շենգավիթ	01-011-206-012-001	Արդյունաբեր., ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	արդյունաբ.	Շիրակի փ.-ին հարող տարածք
135	Շենգավիթ	01-011-1320-001	Բնակավայրերի	ընդհ. օգտագործ.	Շիրակի փողոցին հարող տարածք
136	Շենգավիթ	01-011-381-013	Արդյունաբեր., ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	արդյունաբ.	Վ. Շենգավիթ 10փ-ին հարող տարածք
137	Շենգավիթ	01-011-046-002	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Մանանդյան փող.-ին հարող տարածք
138	Շենգավիթ	01-011-688-121	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Եղ. Թադևոսյան նրբ. թիվ 10/ 1
139	Շենգավիթ	01-011-688-122	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Տարոնցու փող.-ին հարող տարածք
140	Շենգավիթ	01-011-688-163	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Տարոնցու փող.-ին հարող տարածք
141	Քաբաքեռ-Զեյթուն	01-012-002-009	Բնակավայրերի	տնամերձ	Սարկավագի փող. 6-րդ նրբ. 8 տուն
142	Նորք-Մարաշ	01-009-023-021	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Գ.Հովսեփյան փողոցին հարող տարածք
143	Աջափնյակ	01-001-022-087	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Արզումանյան փողոցին հարող տարածք
144	Արաբկիր	01-003-110-065	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Կոմիտասի պողոտային հարող տարածք
145	Նորք-Մարաշ	01-009-023-021	Բնակավայրերի	տնամերձ	Գ.Հովսեփյան փողոցին հարող տարածք
146	Արաբկիր	01-006-1253-001	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Այգեստան
147	Արաբկիր	01-003-117-039	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Ավետիսյան փողոցին հարող տարածք
148	Շենգավիթ	01-011-085-001	Բնակավայրերի	տնամերձ	Արագածի փողոցին հարող տարած

149	Շենգավիթ	01-011-085-002	Բնակավայրերի	տնամերձ	Արագածի փողոցին հարող տարած
150	Կենտրոն	01-006-227-007	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Տոլստոյի փողոցին հարող տարածք
151	Շենգավիթ	01-011-075-041	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Բունիաթյան փողոցին հարող տագրածք
152	Շենգավիթ	01-011-075-028	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Բունիաթյան փողոցին հարող տագրածք
153	Շենգավիթ	01-011-303-038	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Տարոնցի փողոցին հարող տարածք
154	Կենտրոն	01-006-512-001	Բնակավայրերի	տնամերձ	Ռուսթավելի փողոցին հարող տարածք
155	Նորք - Մարաշ	01-009-084-073	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Ամառանոցային փողոցին հարող տարածք
156	Կենտրոն	01-006-305-001	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Ագաթանգեղոսի փողոցին հարող տարածք
157	Կենտրոն	01-006-305-093	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Ագաթանգեղոսի փողոցին հարող տարածք
158	Կենտրոն	01-006-305-094	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Ագաթանգեղոսի փողոցին հարող տարածք
159	Նոր Նորք	01-008-1177-001	Բնակավայրերի	բնակելի	Դավիթ Բեկի փողոցին հարող տարածք
160	Աջափնյակ	01-004-056-012	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	16 թաղամաս
161	Մալաթիա-Սեբաստիա	01-007-282-071	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Լենինգրադյան փողոցին հարող տարածք
162	Շենգավիթ	01-011-467-039	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Նորագավիթ 8-րդ փողոց
163	Նուբարաշեն	01-010-107-035	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Նուբարաշեն 9-րդ փողոց
164	Քանաքեռ-Զեյթուն	01-012-306-001-216	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Ռուբինյանց փողոցին հարող տարածք
165	Կենտրոն	01-006-305-015	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Գ.Լուսավորիչ փողոցին հարող տարածք
166	Դավթաշեն	01-004-110-208	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Դավթաշեն 3-րդ թաղ

167	Կենտրոն	01-006-182-001	Բնակավայրերի	հասարակ. կառուցապ.	Տ.Մեծի փողոցին հարող տարածք
168	Աջափնյակ	01-001-103-046	Բնակավայրերի	Բնակելի և հասարակ. կառուցապ.	Նազարբեկյան թաղամաս
169	Աջափնյակ	01-001-1054-001	Բնակավայրերի	Բնակելի և հասարակ. կառուցապ.	Նազարբեկյան թաղամաս

»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 580-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ օրենք/ 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ ավագանին որոշում է ընդունում Երևանի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ:

2012 ծրագիրը ընդունվել է Երևան քաղաքի ավագանու 25.12.2012թ. հ. 580-Ն որոշմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածի համաձայն՝ գույքային իրավունք է նաև սերվիտուտը:

ՀՀ հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ սերվիտուտով ծանրաբեռնված հողամասի սեփականատերն իրավունք ունի <u>վճար</u> պահանջել այն անձանցից, ի շահ որոնց սահմանվել է սերվիտուտը, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ:

Երևան քաղաքի ավագանու 2012 և նախորդ տարիների ծրագրերով կարգավորված չէին սերվիտուտի իրավունքի հետ կապված հարաբերությունները, այդ թվում՝ վճարի չափը:

Նախագծով առաջարկվում է սահմանել սերվիտուտի տրամադրման ժամկետը և վճարի չափը:

Օրենքում 08.02.2012թ. հ. ՀՕ-15-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 24.03.2012թ.) կատարվել է փոփոխություն, որի արդյունքում Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի վերաբերյալ Երևան քաղաքի ավագանու որոշման մեջ պետք է նշվեն նաև հողամասերի գտնվելու վայրը, ծածկագրերը, Երևանի գլխավոր հատակագծով սահմանված նպատակները:

08.02.2012թ. հ. ՀՕ-15-Ն օրենքով կատարված փոփոխությունների պահանջներից ելնելով Երևան քաղաքի ավագանու մի շարք որոշումներով արդեն իսկ հաստատվել են թվով 64623 համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ցանկեր և սույն նախագծով նախատեսվում է նաև Երևան քաղաքի ավագանու 25.12.2012թ հ.580-Ն որոշման հավելվածի VI-րդ գլուխը լրացնել օտարման առաջարկվող հողամասերի նոր ցանկով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 580-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N580-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 580-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N580-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ